

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

2007 թվապահի մարտի 19-ին ՄԵՂՐԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱ ՀԻԴՐՈՒ ԷԼԵԿՏՐԱԿԱՑՄԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 հուլիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի մարտի 19-ին Մեղրիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորու-

թյունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի մարտի 19-ին՝ Մեղրիում: Համաձայնագրի նպատակն է արդյունավետ օգտագործել Մեղրի և Ղարաչիլար վայրերում Արաքս գետի հիդրոներուժը:

Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսվում է Մեղրիի և Ղարաչիլարի հիդրոէլեկտրակայանների կառուցումն սկսել 2007 թվականին և ավարտել վեց տարվա ընթացքում: Համաձայնագրի 4-րդ հոդվածով նախատեսվում է համատեղ ուսումնասիրության և շինարարական գոտում Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև սահմանային երթևեկությունը դյուրացնելու նպատակով առանձին կանոնակարգի ստորագրում երկու ամսվա ընթացքում, որով սահմանվելու են Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության սահմանով երկու երկրների քաղաքացիների երթևեկության, ինչպես նաև համատեղ ուսումնասիրության և շինարարական գոտու տարածք շինանյութի և սարքավորումների ներմուծման ձևերը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ՀՀ համապատասխան կազմակերպությունների միջոցով համագործակցել Իրանական կողմի հետ Արաքս գետի վրա /Մեղրի և Ղարաչիլար/ հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման բնագավառում,

- ամրագրել Արաքս գետի հիդրոէներգետիկ ներուժն օգտագործելու՝ երկու պետությունների իրավունքը միջազգային պայմանագրերի շրջանակներում գործող միջազգային կազմակերպություններում և անհրաժեշտության դեպքում պաշտպանել այդ իրավունքը,

- ֆինանսավորել Մեդրիի հիդրոէլեկտրակայանի նախագծումը, կառուցումը և սարքավորումներով ապահովումը,

- ինքնուրույն կատարել Հայկական կողմի ընթացիկ աշխատանքները, այդ թվում՝ շինությունների, սարքավորումների, ամբարտակների և հիդրոկայանների շահագործման, պահպանման և վերանորոգման աշխատանքները, և խուսափել ցանկացած քայլից, որը կվնասի էլեկտրակայաններին և դրանց բնականոն գործունեությանը,

- փոխգործակցել Իրանական կողմի համապատասխան ներկայացուցիչների՝ ՀՀ տարածք անարգել մուտքն ու ելքն ապահովելու հարցում՝ այն դեպքերում, երբ Իրանական կողմի համար անհրաժեշտություն կառաջանա ստուգելու կամ վերանորոգելու ՀՀ տարածքում գտնվող իր շինությունները,

- հոգալ ՀՀ-ին պատկանող շինությունների վերանորոգման, պահպանման և շահագործման հետ կապված բոլոր ծախսերը,

- էլեկտրակայանների կառուցումը դադարեցնելու նպատակով օգտագործել ՀՀ ֆինանսական, տեխնիկական, ճարտարագիտական և շինարարական ներուժը, ինչպես նաև շինանյութերի ու սարքավորումների ձեռքբերման հարցում ՀՀ կարողությունները՝ ՀՀ-ում գործող կանոնների և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ու Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության միջև փոխադարձ պայմանավորվածության համաձայն:

3. Կողմերը վերոհիշյալ համաձայնագրի մեկնաբանման կամ իրականացման ընթացքում ծագած տարաձայնությունները կլուծեն խորհրդակցությունների և դիվանագիտական բանակցությունների միջոցով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 հուլիսի 2007 թվականի
ՄԴՈ-706